



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

« 01 » _____ 02 _____ 2021թ.

№ 08/ԼԱ/ - 37

Հունվարի 25-31-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Հունվարի 28-ի և 31-ի ցերեկը առանձին շրջաններում, 29-ի գիշերը և 30-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Ջերմուկում՝ 27,3մմ, Ապարան լճայինում՝ 26մմ, Հրազդանում՝ 23,3մմ, Ուրցաձորում՝ 21մմ, Անանուն լքք.-ում՝ 18մմ, Ապարանում՝ 15,9մմ, Արթիկում՝ 15մմ, մնացած շրջաններում՝ 3-14մմ քանակությամբ: Հունվարի 25-27-ին, 28 և 31-ի գիշերը, 29-ից ցերեկը դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը հունվարի 25-ին նորմայից ցածր է եղել 2-4 աստիճանով (Արարատյան դաշտում՝ 4-6, Տավուշում և Լոռիում նորմայից բարձր՝ 4-5 աստիճանով), 26-27-ին՝ նորմայից բարձր է եղել 3-6 (Արարատյան դաշտում նորմայից ցածր՝ 1-3 աստիճանով), 28-31-ին նորմայից բարձր է եղել՝ 4-8 (Արարատյան դաշտում՝ 2-4) աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է հունվարի 29-31-ին: Տավուշում, Սյունիքում գրանցվել է +13...+16°C (Սիսիանում՝ +10°C), Լոռիում՝ +8...+12°C, Արարատյան դաշտում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի նախալեռներում՝ +4...+6°C (Արենիում՝ +10°C), Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի լեռներում՝ 0...+5 աստիճանատաքությամբ:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է հունվարի 25-ին: Շիրակում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի լեռներում գրանցվել է -17...-21°C (Աշոցքում՝ -25°C, Ամբերդում՝ -13°C, Ջերմուկում՝ -12°C), Գեղարքունիքում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի նախալեռներում, Արարատյան դաշտում՝ -12...-17°C (Մասրիկում՝ -28°C, Արաբկիրում՝ -10°C, Սեմյոնովկայում՝ -9°C), Լոռիում՝ -4...-8°C, Տավուշում, Սյունիքում՝ -2...-6°C (Սիսիանում՝ -14°C):

Շաբաթվա ընթացքում դիտվել քամի՝ Իջևանում, Ծաղկահովիտում, Սևանում, Ստեփանավանում, Գավառում, Արթիկում, Գորիսում՝ 8-14մ/վ, պողոթյունների ժամանակ՝ 17-20մ/վրկ (Պուշկինի լճ.-ում՝ 15-25մ/վրկ, պողոթյունների ժամանակ՝ 23-35մ/վրկ, Տաշիրում՝ 16-18մ/վ, պողոթյունների ժամանակ՝ 20մ/վրկ) արագությամբ:

Հունվարի 30-ին Անանուն լքք.-ում, Գավառում և Արթիկում դիտվել է բուք՝ 5-8մ/վրկ, պողթկումների ժամանակ՝ 14-18մ/վրկ արագությամբ:

Հունվարի 30-ին Արարատում դիտվել է մառախուղ՝ 40մ տեսանելիությամբ:

Հունվարի 31-ի դրությամբ ծյան ծածկը կազմում է Արագած բարձր լեռնային կայանում 118սմ, Ամբերդում 68սմ, Որոտանի լքք.-ում՝ 62սմ, Ջերմուկում՝ 60սմ, Հրազդանում՝ 56սմ, Անանուն լքք.-ում՝ 54սմ, Ապարան լճայինում՝ 43սմ, Ապարանում՝ 39սմ, Ֆանտանում՝ 34սմ, Աշոցքում՝ 32սմ, Ճամբարակում և Սեմյոնովկայում՝ 31սմ, Ամասիայում՝ 28սմ, Մարտունի՝ 27սմ, Մասրիկում՝ 25սմ, Ուրցաձորում՝ 23սմ, Սևանում՝ 22սմ, Արթիկում՝ 19սմ, մնացած շրջաններում՝ 3-15սմ:

Հանրապետության գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում մնացել է անփոփոխ և կազմել՝ 1900.52մ (31.01.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 11 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար

Լ.Ազիզյան